ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918-1920 ԹԹ.

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

Ռուսաստանի կայսրության անկումից հետո տեղի ունեցած բոլոր նշանակալի իրադարձություններն ազդեցին նաև դպրոցական կյանքի վրա: Անդրկովկասի Հատուկ Կոմիտեի (ՕԶԱԿՈՄ) կրթության կոմիսարիատին կից կազմակերպվեց խորհուրդ այսրկովկասյան երեք առավելապես մեծաթիվ ազգությունների և ռուսների քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից: Այդ խորհուրդն առանձին ուշադրության առավ դպրոցների ազգայնացման խնդիրը, որն այդ օրերին չափազանց կարևորություն ստացավ: Թեև 1917 թ. վերջերին Այսրկովկասում արդեն սկսվել էր դպրոցների ազգայնացումը, սակայն քաղաքական հետագա բարդ իրադրության հետևանքով կանգ էր առել. հայ, վրացի և այսրկովկասյան թուրքերի ներկայացուցիչները համերաշխությամբ աշխատեցին և որոշեցին 1918–1919 ուստարում դպրոցների ազգայնացումն անշեղորեն իրականացնել[1]: Նորակազմ Վրաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 1918–1919 ուստարվա սկզբին իրականացվել էր գլխավորապես միջնակարգ (գիմնազիա) պետական դպրոցների ազգայնացումը, որոնք, ըստ ուսուցման լեզվի, բաժանվեցին վրացական, հայկական և ռուսական դպրոցների: Թիֆլիսում ազգայնացվել էին միջնակարգ դպրոցների 60 տոկոսը, իսկ մյուսներում ուսուցման լեզուն շարունակում էր մնալ ռուսերենը[2]: Փոխվարչապետ Նոյ Ռամիշվիլին 1918 թ. օգոստոսին Վրաստանի Հայոց ազգային խորհրդի անդամներ Ա. Երզնկյանին և Հ. Արղությանին առաջարկել էր ներկայացնել, թե որքա՞ն դպրոց է պետք Թիֆլիսի հայ բնակչության կարիքներն ապահովելու համար: Լուսավորության նախարարին այդպիսի առաջարկներ ներկայացվեցին 1918 թ. հոկտեմբերի 4-ին[3]: Հայկական պետական գիմնազիաներ դարձան Երրորդ արականը և Երրորդ իգականը, թեև դա կրկնակի պակաս էր Հայոց ազգային խորհրդի խնդրած թվից[4]: 1918–1919 ուստարվա սկզբին Թիֆլիսի պետական միջնակարգ դպրոցներում ուսանում էր 2868 հայազգի աշակերտ-աշակերտուհի[5]: Ըստ 1918 թ. հուլիսի 26-ի կառավարության № 886 որոշման, ազգայնացրած պետական դպրոցներում նախ պետք է ուսանեին Վրաստանի քաղաքացիություն ընդունած ծնողների զավակները, ապա՝ ազատ տեղերի դեպքում

---

[1] *Ե. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. Վրաստանի հայոց դպրոցները.– «Աշխատավոր», 3. VII. 1919: Գ. Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն. Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում. Երևան, 2003, էջ 21:*

[2] П. Агеев о Грузии.– “Борьба”, 12. XI. 1919.

[3] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 441, ց. 1, գ. 30, թ. 2–3:*

[4] *Նույն տեղում, թ. 2–2 շրջ.:*

[5] *Նույն տեղում, թ. 22:*

նաև օտարահպատակների երեխաները[6]: Ինչու չէ, նաև այդ միջոցով կառավարությունը փորձում էր խրախուսել և արագացնել բնակչության միջև նորակազմ Հանրապետության քաղաքացիության տարածումը: Լուսավորության նախարարությունը կազմավորեց հայկական պետական դպրոցների վարչություն, որտեղ աշխատում էին հիմնականում վրաց կամ այլ ազգերի ներկայացուցիչներ, նույնը կատարվեց նաև տեսուչներ նշանակելիս, որը չէր համապատասխանում նախարարության որդեգրած ազգայնացման պահանջներին[7]: Այդ առթիվ, Հայոց ազգային խորհրդի անդամների բողոքին ի պատասխան, լուսավորության նախարարության պաշտոնյաները հայտնել էին, թե ազգայնացրած գիմնազիաների վարչակազմը վերահաստատվել է մեկամյա ժամկետով, որից հետո թափուր տեղերի առաջացման դեպքում նկատի կառնվի Հայոց ազգային խորհրդի պահանջը՝ այդ պաշտոններում տեսնել հայերենին տիրապետող անձանց[8]:

Դպրոցների ազգայնացումը դժվարին գործընթաց էր, քանի որ այն կապված էր հասարակության մի մասի հոգեբանության արմատական փոփոխման հետ, որը կտրուկ քայլերի դեպքում դժգոհությունների տեղիք էր տալիս: Ազգայնացման մասին որոշման կատարումն ընթանում էր բավականաչափ դանդաղ, քանզի, նախ և առաջ, չկային անհրաժեշտ թվով հայերեն իմացող մանկավարժներ, ինչպես նաև դասագրքերի մեծ մասը ռուսերեն էր: Բացի այդ, մանկավարժական հասարակության մի մասն այն տեսակետն էր հայտնում, թե պետք չէ շտապել և անհրաժեշտ է աստիճանաբար անցնել ազգային դպրոցների կազմակերպմանը[9]: Ազգայնացրած դպրոցներում դասավանդում էին ռուսական կրթություն ստացած անձինք, գլխավորապես քաղաքային ուսումնարաններում և բարձր-տարրական դպրոցներում ուսանած «ցենզովիկները»: Քիչ էին ուսուցչական դպրանոցը կամ հայոց թեմական դպրոցներն ավարտած ուսուցիչները: Ռուսական տիրապետության օրոք գիմնազիաներում կրթված հայ ուսուցիչներն ընդհանրապես հայերեն լեզվի թույլ պատրաստություն ունեին և սահմանափակվում էին ինքնակրթությամբ[10]: Բացի պետական դպրոցներից, Թիֆլիսում գործում էին Ներսիսյան, Հովնանյան, Գայանյան միջնակարգ դպրոցները: 1918 թ. գավառներում հայկական միջնակարգ ուսումնական հաստատություններ չկային: Բացառություն էր կազմում Թելավին, որտեղ հայ անհատների ջանքերով բացվել էր մասնավոր գիմնազիա: Հետագայում հաջողվեց գիմնազիա ունենալ նաև Գորիում: 1918 թ. աննախանձելի դրության մեջ էին Վրաստանի հայոց եկեղեցական ծխական դպրոցները: Դրանց զգալի մասը 1918–1919 ուստարում մնացել էր փակ՝ շենքերը գաղթականներով լցված լինելու[11], իսկ մյուսներն էլ նյութական միջոցների բացակայության

---

[6] *Դպրոցի խնդիրը Վրաստանում.– «Հորիզոն», 7. VIII. 1918.*

[7] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 30, թ. 18–18 շրջ:*

[8] *Նույն տեղում, թ.* 16:

[9] *Գ. Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն. նշվ աշխ., էջ 32:*

[10] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 43, թ. 2 շրջ:*

[11] *Թիֆլիսում՝ Ս. Բեթխեհեմ, Ս. Գևորգ, Ս. Սարգիս, Ս. Կարապետ, Ս. Աստվածածին և Վանքի դպրոցները (նույն տեղում, թ. 24):*

պատճառով: Գաղթականության վերադարձից հետո Ջավախքում հայկական դպրոցների մեծ մասն այդպես էլ չվերաբացվեց: Մինչդեռ, պետությունն ամեն կերպ օժանդակում էր գավառի վրացական գյուղերի դպրոցներին[12]: Դրությունը համեմատաբար բարվոք էր Սուխումի (Աբխազիա) և Սոչիի շրջաններում[13], որտեղ տեղի Հայոց ազգային խորհուրդները վերաբացել էին ծխական դպրոցները և նույնիսկ ընտրել շրջանային դպրոցական տեսուչներ[14]: Աբխազական ժողովրդական խորհուրդը[15], նկատի ունենալով երկրամասի ազգային բազմազանությունը, 1918 թ. հուլիսի 25-ին որոշել էր Աբխազիայի տարածքում դպրոցների ազգայնացումը չդարձնել պարտադիր՝ հարցի լուծումը թողնելով բնակչության տեղական ժողովներին[16]: Համեմատաբար լավ վիճակում էին քաղաքներում գտնվող հայկական տարրական դպրոցները, որոնց վերահսկողությունը հանձնված էր քաղաքային ինքնակառավարման վարչություններին: Որոշ դեպքերում դա արվում էր ստիպողական կարգով: Սոնախի հայկական (նախկին՝ Մարիամյան օրիորդաց) դպրոցը լուսավորության նախարարության 1918 թ. հուլիսի 19-ի կարգադրությամբ դուրս էր բերվել տեղի Հայկական կոմիտեի իրավասությունից և հանձնվել քաղաքային վարչության տնօրինությանը[17]:

Վրաստանի նորակազմ Հայոց ազգային խորհրդի 1918 թ. օգոստոսի 2-ի առաջին իսկ նիստը նվիրված էր դպրոցական խնդրին[18]: Խորհուրդը ցանկանում էր վերահսկողության իրավունք ունենալ հայկական բոլոր դպրոցների նկատմամբ և եռանդուն միջնորդություններ ու բանակցություններ էր վարել մինչև անգամ կառավարության նախագահի հետ: Չնայած վրաց պաշտոնյաների տված բազում խոստումներին՝ դրանք իրական գործի չէին վերածվել գլխավորապես լուսավորության նախարարության դիմադրության պատճառով: Հայկական ծխական դպրոցների պատկանելության հարցի շուրջ նույնպես վեճ էր առաջացել Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ու թեմական Առաջնորդի միջև և ստեղծել երկիմաստ կացութ-

---

[12] *Ա. Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին. Երևան, 2003, էջ 319: Ն ո ւ յ ն ի՝ Նյութեր Ախալցխայի և Ախալքալաքի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ). Երևան, 2005, էջ 89: «Այս անարդարությունը խիստ ծանր էր գալիս վիրահայոց սրտին,– կարդում ենք «Հայրենիք» ամսագրում,– որովհետև նրանք, մի կողմից, տեսնում էին, որ վրաց կառավարությունը արտակարգ շռայլությամբ դրամներ էր բաց թողում կրթական-մշակութային հաստատությունների ցանկով զուտ վրացաբնակ շրջանները ծածկելու համար, իսկ մյուս կողմից՝ գիտակցում էին, որ պետական և համայնական հասույթների շատ խոշոր մասը հայերից էր գանձվում» (Ա. Ա. Մ ե լ ք ո ն յ ա ն. Ջավախքը…, էջ 319):*

[13] *Տե՛ս Բ. Մ ա հ լ �smՅ ա ն. Վրաստանի կառավարությունը և Սոչիի շրջանի համշենահայ համայնքը (1918–1920 թթ.).– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005, էջ 163-180:*

[14] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 26, թ. 15:*

[15] *«Ինքնավար Աբխազիայի» ներկայացուցչական մարմին: Տե՛ս Բ. Մ ա հ լ ՄՅ ա ն. Աբխազիայի կարգավիճակի հարցը վրաց-աբխազական հարաբերություններում (1917 թվականից մինչև 1921 թվականի փետրվար).– Երիտասարդ արևելագետների հանրապետական XXV գիտական նստաշրջան: Զեկուցումների թեզեր, Երևան, 2004, էջ 33–35:*

[16] *Աբխազիան և ազգայնացումը.– «Հորիզոն», 31. VII. 1918.*

[17] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 26, թ. 1, 4:*

[18] *«Հորիզոն», 4. VIII. 1918.*

յուն[19]: Ներսիսյան դպրանոցի հոգաբարձությունը ուսումնական այդ հռչակավոր օջախը չէր ենթարկել Հայոց ազգային խորհրդի իրավասությանը, քանի որ վերջինս կառավարության կողմից ճանաչված չէր և հետևապես չուներ սահմանված իրավական լիազորություններ[20]: Հայոց ազգային խորհուրդը պատրանք էր տածում, որ լուսավորության նախարարության հետ կարող է վերահսկել հայոց լեզվի, հայ գրականության և պատմության ուսուցումը պետական դպրոցներում: Այդ նպատակի համար խորհուրդը լիազորել էր իր անդամ, նշանավոր հայագետ Երվանդ Տեր-Մինասյանին, որի մասին 1918 թ. հոկտեմբերի 7-ին տեղյակ էր պահվել լուսավորության նախարարությանը[21]: Սակայն շուտով վրաց պաշտոնյաները մերժեցին այդ նախաձեռնությունը, որը նախարարությունը հիմնավորում էր նրանով, թե մինչև չպարզվի մշակութային ինքնավարության տեսակը Վրաստանում, վերահսկման հարցն օրակարգից հանվում է: Հայոց ազգային խորհուրդը, համաձայն չլինելով այդ պարզաբանման հետ, բողոքում է Վրաստանի վարչապետին, թե նույնիսկ ռուսական տիրապետության օրոք հայ հոգևորականությունն ուներ այդ իրավունքը, ուստի և այժմ դա պետք է անցնի Հայոց ազգային խորհրդի իրավասությանը[22]: Որոշվում է, նախ և առաջ, ազգայնացնել պետական հայկական դպրոցների Ա դասարանները՝ մյուսներում դասավանդումը առայժմ թողնելով - ռուսերեն:

Հայոց ազգային խորհուրդը մտահոգված էր նաև նրանով, որ Թիֆլիսում զգալի թվով հայեր թերահավատորեն էին տրամադրված հայկական դպրոցների նկատմամբ: Դա բխում էր հայերեն լեզվին վատ կամ էլ առհասարակ չտիրապետելու հանգամանքից: Այսպես, Երրորդ իգական միջնակարգ դպրոցի Ա դասարանի աշակերտների ծնողական ժողովում պարզվեց, որ 68 դպրոցականից հայերեն խոսում են միայն երկուսը: Քանի որ բարձր-տարրական դպրոցի չորսամյա դասընթացը երեխաները ռուսերենով էին ավարտել, ապա ծնողները դեմ էին գիմնազիայի առաջին դասարանի ազգայնացմանը, ինչպես դա առաջարկում էր Հայոց ազգային խորհուրդը, և նման քայլը համարում էին հակամանկավարժական[23]: Սակայն, նկատի ունենալով հենց այս զանգվածի «տատանողական» տրամադրությունները, Հայոց ազգային խորհուրդը լուսավորության նախարարությունից պահանջում էր փակել ռուսական բաժանմունքները պետական հայկական գիմնազիաներում: Իսկ Թիֆլիսի չորս ռուս-հայկական և մեկ վրաց-հայկական խառն ուսուցմամբ գիմնազիաներում հայ մանուկներին տեղավորել միայն հայկական բաժանմունքներում[24]: Եվ քանի որ հայերենին չտիրապետող երեխաների ծնողները՝ ռուսական գիմնազիա ընդունվելու համար գրություն տալու խնդրանքով դիմում

---

[19] *Դպրոցական կյանքը 1918 թ.– «Ժողովրդի ձայն», 5. I. 1919.*
[20] *Վրաստանի Հայոց ազգային խորհուրդ.– «Ժողովրդի ձայն», 19. III. 1919.*
[21] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 30, թ.* 5:
[22] *Նույն տեղում, թ.* 17:
[23] *Նույն տեղում, թ.* 4:
[24] *Նույն տեղում, թ. 3, 19 շրջ.:*

էին Հայոց ազգային խորհրդին, ապա կարելի է եզրակացնել, որ լուսավորության նախարարությունը հարգել է Հայոց ազգային խորհրդի այդ պահանջը[25]:

Թիֆլիսի հայ ուսնոր խավի ներկայացուցիչների ընդհանուր ժողովներից մեկում միաձայն որոշվեց հոգալ ոչ պետական հայկական դպրոցների պահպանման ծախսերը, մինչև որ կընդունվեր Վրաստանի սահմանադրությունը, և որով էլ կսահմանագծվեին հայկական ազգային մշակութային ինքնավարության իրավունքները[26]: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ենթակայության տակ գտնվում էին ժողովրդական դպրոցներ (տե՛ս աղյուսակներ №1 և №2)[27], որոնք կառավարության կողմից ճանաչված չլինելով՝ փաստորեն օգտվում էին ինքնավարությունից, և հարցի այդպիսի դրվածքին բանավոր համաձայնություն էին տվել լուսավորության նախարարության պատասխանատու աշխատողները, մինչև որ մշակութային ինքնավարության մասին օրենքով վճռվեր դպրոցական խնդիրը[28]:

Հայոց ազգային խորհրդին պատկանող ստորին-տարրական դպրոցներում նախատեսված էր եռամյա դասընթաց[29], ի տարբերություն պետական դպրոցների, ուր ուսուցումը չորսամյա էր[30]: Բացի այդ, միջոցների տնտեսման նպատակով Հայոց ազգային խորհուրդը 1919–1920 ուստարուց իր տարրական դպրոցները վերածեց երկսեռների[31]: Խորհրդին պատկանող տարրական դպրոցներում ուսուցումն անվճար էր: Թեև պետական միջնակարգ դպրոցները վճարովի էին, սակայն դրանց ուսման վարձը զգալիորեն ցածր էր մասնավորներից: Հայոց ազգային խորհրդին ենթակա միջնակարգ դպրոցների վարձը զգալիորեն գերազանցում էր պետականը[32]: 1919 թ. հոկտեմբերին Հայոց ազգային խորհրդի Գործադիր մարմինը որոշեց ուսման վարձից ազատել հայկական ժողովրդական դպրոցների ուսուցիչ-ուսուցչուհիների զավակներին[33]:

Աղյուսակ №1. 1919-1920 ուստարի

Դպրոցների աստիճանը	Դպրոցների թիվը	Աշակերտների քանակը			Դասարանների թիվը	Դասարաններում աշակերտների միջին թիվը
		տղաներ	աղջիկներ	ընդամենը		
Ստորին-տարրական	45	1940	1926	3866	134	29
Բարձր-տարրական	5	269	884	1153	36	32
Միջնակարգ	3	26	461	487	18	27
Ընդամենը	53	2235	3271	5506	188	29

[25] *Նույն տեղում, թ. 29, 30:*

[26] *Ուշացած խորհրդատու.– «Աշխատավոր», 22. II. 1920.*

[27] *Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը և նրան ենթակա դպրոցները.– «Նոր խոսք», 27. IX. 1920.*

[28] *«Աշխատավոր», 15. III. 1920.*

[29] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ.* 61:

[30] *«Աշխատավոր», 22. X. 1920.*

[31] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ.* 84:

[32] *Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը և նրան ենթակա դպրոցները.– «Նոր խոսք», 27. IX. 1920.*

[33] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 90, թ.* 2:

Ա աղյուսակ № 2. 1920-1921 ուստարի

	Ստորին-տարրական	Բարձր-տարրական	Միջնակարգ	Ընդամենը
Թիֆլիսում	3	3	2	8
գավառներում	28	12	1	41
ընդամենը	31	15	3	49

Հայոց ազգային խորհրդի Գործադիր մարմնի կազմում սկզբնապես գոյություն ունեին միջնակարգ և տարրական դպրոցների առանձնացված վարչություններ, որոնք, համապատասխանաբար վարում էին Ե. Տեր-Մինասյանը և Ան. Ստամբոլցյանը: Հետագայում ստեղծվեց միասնական վարչություն, որը ղեկավարում էր Իսահակ Հարությունյանը (Ներսիսյան վարժարանի ուսուցիչ): 1919–1920 ուստարում հայկական ժողովրդական դպրոցներում դասավանդում էր 211 ուսուցիչ-ուսուցչուհի (տե՛ս աղյուսակ թիվ 3)[34]: Հայոց ազգային խորհուրդը ձեռնարկել էր կազմել ուսուցչական ցանկ, և այն մանկավարժները, ովքեր ցանկանում էին աշխատատեղ ստանալ, մինչև 1920 թ. մայիսի վերջը պետք է դպրոցական բաժին ներկայացնեին համապատասխան վկայականներ: Նախատեսվում էր, որ 1920-1921 ուստարում դպրոցներում կաշխատեին միայն նրանք, ովքեր կլինեին ցանկի մեջ[35]:

Աղյուսակ № 3

Դպրոցների աստիճանը	Բարձրագույն կրթությամբ	Միջնակարգ կրթությամբ	Մասնագիտական կրթությամբ	Առանց ուսուցչական ցենզի	Ընդամենը
Ստորին-տարրական	2	61	22	24	109
Բարձր-տարրական	13	21	7	7	48
Միջնակարգ	24	20	9	1	54
Ընդամենը	39	102	38	32	211

Վրաստանի 400.000 հայ բնակչությունն ըստ խոսակցական լեզվի բաժանվում էր երկու մասի՝ հայախոս և վրացախոս: Վերջիններս շուրջ 100000 էին և, բացի Թիֆլիսից, հիմնականում բնակվում էին Քութայիս, Գորի, Ցխինվալ, Դուշեթ, Թելավ, Սղնախ, Սուրամ, Վելիսցիխե, Դմանիս, Ախալգորի, Կավթիսխևի ավաններում: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նախագահ Բագրատ Թոփչյանի կարծիքով իրենց միջոցներն առաջին հերթին պետք է ուղղվեին այդ շրջաններում հայկական դպրոցների բացմանը[36]: Վրաց իշխանությունները հրաժարվում էին ար-

---

[34] *Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը և նրան ենթակա դպրոցները.– «Նոր խոսք», 27. IX. 1920.*

[35] *Հայտարարություն.– «Նոր աշխատավոր», 22. III. 1920.*

[36] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ. 66: 1919 թ. դեկտեմբերին հանրային կրթության նախարար Ն. Աղբալյանը դիմում է Հայաստանի Նախարարների խորհրդին, մասնավորապես գրելով. «…Վրաստանի քաղաքականությունը բավական պարզված է մեր դպրոցների վերաբերմամբ՝ ամեն*

տոնել վրացախոս հայ մանուկների համար հայկական դպրոցների բացումը[37]: 1918-1919 ուստարվա սկզբին լուսավորության նախարարության կարգադրությամբ դպրոցներում վրացախոս հայ մանուկների համար դասավանդումը պետք է իրականացվեր վրացերեն լեզվով, իսկ հայերենի ուսուցումը մնում էր իբրև առանձին առարկա[38]: Արհեստական վիճաբանություն էր հրահրվել «մայրենի» և «մայրական» լեզուների խնդրի շուրջ: Վրաց պաշտոնյաներն ասում էին, թե իրենք դեմ չեն լինի, որ հայերենով դասավանդումն իրականացվի այնտեղ, որտեղ բնակչությունը գիտի այն, իսկ որտեղ խոսում են միայն վրացերենով, ապա դա նրանց «մայրենի» լեզուն պետք է համարել, առանց ազգային պատկանելության[39]: Ոչ բոլոր վրացախոս հայ ծնողներն էին ցանկանում իրենց զավակներին կրթել վրացական դպրոցներում: Այսպես, Վելիսցիխեի պետական դպրոցում 1917–1918 ուստարվա վերջում ուսանում էր 115 հայ մանուկ, ազգայնացումից հետո՝ 1918 թ. սեպտեմբերին, դպրոցը բաժանվել էր երկու մասի՝ հայկական և վրացական: Սակայն լուսավորության նախարարության տարրական դպրոցների վարչության պետ Գ. Ճումբուրիձեն, համարելով, որ տեղի հայերի համար (4000 հոգի) վրացերենը «մայրենի» լեզու է, կարգադրեց ուսուցումն իրականացնել միայն վրացերենով: Այդ պահից դպրոցում շարունակել է ուսանել 40 հայ մանուկ[40]: 100 գյուղի վրացախոս հայ բնակչությունը զուրկ մնաց հայերեն լեզվի դասավանդումից, քանի որ զեմստվոնները Հայոց ազգային խորհրդին արգելում էին այդ վայրերում հիմնել հայկական դպրոցներ, իսկ պետականներում էլ, խախտելով նախկին որոշումը, ոչ մի տեղ չէր հատկացվում հայերենին, գոնե իբրև առարկայի: Այդ արգելքի հիմնական պատճառաբանությունն այն էր, թե, իբր, հակամանկավարժական է երեխաներին սովորեցնել մի լեզվով, որով նրանք չեն խոսում: Հայ դիտորդները, սակայն, դա միան-

---

կերպ արգելքներ հարուցել, որ մեր դպրոցները չվերաբացվեն, մանավանդ վրացախոս [հայերի] գյուղերում: Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը Թիֆլիսում նյութական աջակցություն խնդրեց հատկապես վրացախոս [հայերի] գյուղերի համար: Ի տես այս երևույթների խնդիր է հարուցվում, թե մեր հանրապետությունը քաղաքական նպատակներով պետք չէ՞, որ դպրոցական հաստատություններին օժանդակի հարևան հանրապետությունների մեջ, որոնք մեր կառավարության համբերատար ոգին չունեն և հետամուտ են հայ զանգվածների ապազգայնացման, առնվազն զլանում են նրանց ազգային կրթությունը նպաստել ու աջակցել: Ինձ թվում է, որ մեր կառավարության պարտականությունն է հակազդել այս քաղաքականությանը շոշափելի և իրական միջոցներով: Այն է՝ դրամական այնպիսի կացություն ստեղծելով հայ դպրոցների համար հարևան հանրապետության մեջ, որ նրանք եթե ոչ գերազանց, գոնե հավասար պայմանների մեջ լինեն տիրող ժողովրդի դպրոցների համեմատությամբ և չստիպվեն փակվելու կամ կառավարության բռնության առջև տեղի տալու մինչև կատարյալ ապազգայնացում» (ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 98, մեջբ. ըստ Գ. Վ. Վ ա ր դ ա ն յ ա ն, նշվ աշխ., էջ 37-38):

[37] *«Աշխատավոր», 22. II. 1920.*

[38] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 43, թ.* 3: *Ե. Տ ե ր - Մ ի ն ա ս յ ա ն. նշվ. հոդվ.:*

[39] *«Աշխատավոր», 15. III. 1920.*

[40] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ. 48: Վրաստան. տեղեկություններ Կախեթից.– «Աշխատավոր»,* 18. *VI. 1919:*

շանակ ընկալում էին իբրև քաղաքականություն, որն ուղղված էր հայության մի ստվար հատվածի ձուլմանը[41]*:*

Վրաստանի խորհրդարանը որոշել էր 1918 թ. դեկտեմբերի 1-ից վերացնել կրոնի դասավանդումն աշխարհիկ կրթական հաստատություններում: Լուսավորության նախարարությունը պահանջում էր այդ սկզբունքին հետևել նաև Հայոց ազգային խորհրդին պատկանող դպրոցներում: Իս. Հարությունյանն այդ պահանջը հետագայում մեկնաբանել էր հետևյալ կերպ. «[Կրոնի խնդրի] վերաբերմամբ մենք ըստ էությամբ համաձայն լինելով, ըստ ձևի չէինք կարող համաձայնել, քանի որ դա խախտում էր [մեր դպրոցների] ինքնավարության սկզբունքները»[42]*: Ճնշման տակ Հայոց ազգային խորհուրդը 1919 թ. մայիսի 30-ին մի որոշում է արձակել, ըստ որի արգելվում էր իր ենթակայության տակ գտնվող դպրոցներում կրոնի դասավանդումը: Այնուհետև նոր մշակած ու պարտադիր դարձած ուսուցման ծրագրերի մեջ այդ առարկան տեղ չգտավ: Հայոց ազգային խորհրդի նախագահությունն առաջարկում էր 1919–1920 ուստարում անշեղորեն գործադրել սույն որոշումը*[43]*: Թեև եղել են առանձին դպրոցներ, որտեղ աշակերտների ծնողները ցանկացել էին շարունակել դասընթացները, սակայն դրանք եղել էին ծրագրից և դասացուցակից դուրս: 1920 թ. հունիսին Հայոց ազգային խորհրդի դպրոցական վարչությունը շրջաբերական է հղել բոլոր դպրոցներին՝ նախազգուշացնելով, որ 1920–1921 ուստարում որոշումը անվերապահորեն իրագործվի*[44]*: Դրա հետ համաձայն չէին ոչ միայն Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները*[45]*, այլև Հայոց ազգային խորհրդի որոշ անդամներ: Դարեր շարունակ հայ եկեղեցու ազգանվեր գործունեության շնորհիվ հայ դպրոցը պահպանել էր իր ուրույն ազգային դիմագիծը: Ե. Տեր-Մինասյանը գրում էր. «Կրոնի ուսուցումը առանձնապես մեծ նշանակություն ունի այնպիսի դպրոցի համար, որը ցանկանում է լինել ազգային»*[46]*: Լուսավորության նախարարության տարրական դպրոցների վարչության պետ Գ. Ճումբուրիձեն պնդում էր, թե հայկական ժողովրդական դպրոցները տոգորված էին «կղերական*

---

[41] *Կրկնակի հաշվապահություն դպրոցական քաղաքականության մեջ.– «Նոր խոսք», 8. XI. 1920. Թիֆլիսում Հայաստանի նախկին դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանը հաստատում է, որ Վրաստանի կառավարությունն արգելում էր հայկական ազգային դպրոցներ ունենալ վիրախոս հայերի համար: «Պատրվակ բռնելով,– գրում է նա,– թե մանկավարժական կանոնների համաձայն, մանուկների նախնական ուսուցումը պետք է մայրենի լեզվով կատարվի՝ վրաց դպրոցական տեսչությունները պահանջում էին, որ վիրախոս հայերը իրենց զավակներին վրացական դպրոցներ ուղարկեն: …Հին ռուսացման քաղաքականության հետքերով ընթացող այս վրացացման ակնհայտ ձգտումը ժամանակին շատ կրքեր հարուցեց մեր մամուլի և հասարակական շրջանակների մեջ: Սակայն, նա ունեցավ նաև խիստ բարեբար ազդեցություն. վիրախոս հայերը, որ մինչ այդ բավական հեռացել էին ազգային տրամադրություններից՝ տեսնելով…այս վերաբերմունքը՝ վերստին հառեցին իրենց աչքերը դեպի մայր ժողովուրդը…» (Ա. Ջ ա մ ա լ յ ա ն. Հայ-վրացական կնճիռը.– «Հայրենիք», Բոստոն, 1929, մարտ, էջ 117):*

[42] *«Աշխատավոր», 15. III. 1920.*

[43] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 90, թ.* 1:

[44] *«Նոր խոսք», 4. X. 1920.*

[45] *Վիրահայ Ազգային Խորհրդի գործելակերպից.–- «Ժողովրդի ձայն», 12. VI. 1919.*

[46] *Դարձյալ կրոնի դասավանդության վերացման մասին.– «Ժողովրդի ձայն», 1. I. 1919.*

ոգով», որը նա անընդունելի էր համարում դեմոկրատական հանրապետության համար[47]: Մամուլն էլ արձագանքում էր՝ ասելով. «Երբ … պետությունը բաժանում է իրենից եկեղեցին, բնական ու տրամաբանական է, որ իր՝ պետական դպրոցների մեջ չավանդվեն և ոչ մի կրոնի դասեր: Բայց երբ … այլ ազգի ժողովրդին [ստիպում են] … իրենց ազգային ժողովրդական դպրոցներից վերացնել իրենց կրոնը. թերևս մի օր էլ [կարգելեն] իրենց պատմությունը, գուցե և լեզուն…»[48]: Միաժամանակ, դպրոցներում կրոնի դասավանդման վերացման հետ նորից ծագել էր վրացախոս հայերի խնդիրը: Վրաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (այսուհետև՝ ՎՍԴԲԿ) Կենտկոմի անդամ Լ. Նաթաձեն, արտահայտելով պաշտոնական տեսակետները, պահանջում էր Վրաստանում Հայ Առաքելական եկեղեցուն պատկանողներից ոչ բոլորին հայ համարել[49]: Կտրվում էր ևս մի լար, որը նույնիսկ ռուսական տիրապետության ժամանակաշրջանում կապում էր նրանց հայության հետ[50]: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի հիշյալ զիջումից հետո Գ. Ճումբուրիձեն դարձյալ պնդում էր. «Հայոց Ազգային Խորհուրդը 49-51 դպրոց ունի Վրաստանի տերրիտորիայի վրա: …Այդ դպրոցները շատ կասկածելի բնույթ և ուղղություն ունեն. դրանք գլխավորապես նախկին հայոց ծխական դպրոցներն են կազմում, որոնց տիպն ու ուսուցման ծրագիրն ընդհանրապես անընդունելի պետք է համարել դեմոկրատական հանրապետության համար»[51]: Սրան արձագանքեց Իս. Հարությունյանը. «Ազգային Խորհրդի պահած դպրոցների ծրագրերը ոչ թե միայն համապատասխանում են նորագույն մանկավարժական պահանջներին, այլև հիմնված են ամենադեմոկրատական սկզբունքների վրա: Արդյոք պարոն հոդվածագիրը բարեհաճե՞լ է ծանոթանալ այդ ծրագրերին, թե միայն դիտավորյալ ենթադրություններ է անում»[52]:

Վրաստանի հայության առջև ծառացած բազմազան խնդիրների կարգավորմանը պիտի նպաստեր մշակութային ազգային ինքնավարության մասին գաղափարի

---

[47] Г. Ч у м б у р и д з е. Еще об армянских школах.– “Слово”, 16.X .1920:

[48] *Խ ա յ թ ո ւ ն ի. Դարձյալ հայ դպրոցների մասին.– «Մշակ», 29. X. 1920.*

[49] "Борьба", 23. VI. 1920. *Դա առաջին դեպքը չէր, երբ վրացիները նման հարց էին բարձրացնում: Դեռևս 1906 թ. լույս էր տեսել մի հետազոտություն, որի հեղինակն ասում էր. «Շատ ապշեցուցիչ է և միաժամանակ վշտալի, որ Վրաստանում կարելի է հանդիպել այդպիսի վրացի…[որը] հայադավանության է պատկանում: Հայադավան վրացիներին այսօր ստիպում են արհամարհել սեփական վրացերենը և դրա փոխարեն խոսել իրենց համար օտար լեզվով: Սակայն, չբավարարվելով դրանով, չեն սովորեցնում նրանց գրել և կարդալ վրացերեն լեզվով»* (ქართველი გრიგორიანები. სომხის რჯულის ქართველები. ისტორიული მიმოხილვა შ ა ვ შ ე ლ ი ს ა. თბილისი. “ცოდნა”-ს გამოცემა, *1906,* გვ. *11): Միաժամանակ հեղինակը ստիպված էր խոստովանել, որ հայադավան այդ «վրացիները» համառորեն շարունակում էին իրենց կոչել հայ (նույն տեղում):*

[50] *«Ի՞նչ արժե դեմոկրատական կարգը Կախեթիայում ապրող վրացախոս հայի համար, երբ նա զրկված պիտի լինի իր ազգային դպրոցում իր ազգային կրոնը դասավանդվելու իրավունքից, քանի որ հենց կրոնով է որ մնացել է հայ, որ պահել է իր ազգությունը, իր լեզվի հետքերը» (Խ ա յ թ ո ւ ն ի. նշվ. հոդվ.):*

[51] *Վրաստանի տարրական դպրոցների գլխավոր վարիչ պ. Ճումբուրիձեի հոդվածի առթիվ.– «Մշակ», 1. X. 1920.*

[52] *Նույն տեղում:*

իրականացումը: Հայոց ազգային խորհուրդն անգամ մշակել էր «Թեզեր»՝ նվիրված ենթադրյալ «Հայկական ազգային ինքնավարությանը»[53]: Ազգի նվիրյալները նպատակ էին դրել Վրաստանում ստեղծել հայկական ազգային դպրոց, որտեղ հայ երիտասարդ սերունդը ոչ միայն կրթվեր հայերենով, ուսաներ ազգային գրականություն և պատմություն, այլև դաստիարակվեր ազգային ոգով և դրանով ազատ լիներ ձուլման վտանգից: «Թեզերի» 11-րդ կետն արձանագրում էր, որ Վրաստանի ազգությամբ հայ քաղաքացիների «կրթության գործը ամբողջությամբ հանձնվում է Հայոց Ազգային Ինքնավարության: Դպրոցներում դասավանդությունը տարվում է հայերեն լեզվով: …Բարձր-տարրական և միջնակարգ դպրոցներում վրաց[երեն] լեզվի դասավանդությունը պարտավորեցուցիչ է»[54]:

Վրաստանի Հիմնադիր ժողովում ՎՄԴԲԿ իշխող ֆրակցիայի առաջնորդ Ռ. Արսենիձեն համարում էր, որ հայերն արդեն մշակութային օջախ ունեն Հայաստանի Հանրապետությունում և որ հարկ չկա համանման պայմաններ ստեղծել Վրաստանի հայ համայնքի համար: ՎՄԴԲԿ 2-րդ համագումարը, որը կայացել է 1920 թ. ամռանը, այն եզրահանգման եկավ, որ համայնքների մշակութային և կրթական ոլորտները պետք է ամբողջովին տրվեն տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինմանը, քանի որ ազգային փոքրամասնությունների կրթական և մշակութային կարիքների լիակատար բավարարումը հնարավոր է պետական կառուցվածքի լայն ժողովրդավարացման պայմաններում: Վրաց ղեկավարների կարծիքով Վրաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքներն ապահովված էին, քանի որ ժողովրդավարական կարգերը ստեղծում էին երաշխիք ազգային հալածանքի դեմ[55]: Այս կարծիքի հետ համաձայն էր նաև ՎՄԴԲԿ Հայկական սեկցիան: Վերջինս Վրաստանում հայկական մշակութային ինքնավարությանը նվիրված թեզերի վերաբերյալ հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ ասվում էր, «թե այս թեզերի մշակման ժամանակ … առիթ ենք ունեցել շեշտելու, որ ազգային փոքրամասնությունների դպրոցական կարիքների բավարարման և կուլտուրական կյանքի զարգացման համար ավելի ընդունելի և արդյունավետ միջոցը պետական մեխանիզմի լայն դեմոկրատացումն է, որի ժամանակ տեղական և քաղաքային ինքնավարությունները լիովին կփոխարինեն ազգային ավտոնոմիային և կապահովեն պետության մեջ ապրող յուրաքանչյուր քաղաքացու և ազգության բոլոր իրավունքները»[56]: Հայկական սեկցիայի կողմից լիազորված անդամները 1920

---

[53] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 142, թ 1:*

[54] *Թեզեր «Հայոց ազգային ինքնավարության սահմանադրության» մշակված Հայոց ազգայի խորհրդի կողմից.– «Աշխատավոր», 25. III. 1920.*

[55] “Слово”, 23. VI. 1920. *«Բանվորի ձայն», 11. VII. 1920. Այս առթիվ Ա. Ջամալյանը գրում էր, որ «Վրաստանի ազգային փոքրամասնությունների վիճակի մասին գաղափար կազմելու համար մենք օրենքներին չէ որ պետք է դիմենք, այլ այն գործնական քաղաքականությանը, որին հետևում էր վրաց կառավարությունը այս հարցում: Եվ բավական է թեկուզ մի հարևանցի ակնարկ նետել այդ քաղաքականության վրա համոզվելու համար, որ Ժորդանիան և իր կառավարությունը շա՛տ քիչ բան ունեն պարծենալու գոնե հայկական փոքրամասնության իրավունքների հարցում» (Ա. Ջ ա մ ա լ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 116):*

[56] *«Բանվորի ձայն», 27. VI. 1920.*

թ. հուլիսի 6-ին Հայոց ազգային խորհրդում հանդես եկան հետևյալ հայտարարությամբ. «Ընդհանրապես Հայկական Սեկցիան չառարկելով ազգային ավտոնոմիայի գաղափարի դեմ, նրան ավելի նեղ բովանդակություն է տվել, քան [Հայոց ազգային խորհրդի] մյուս ֆրակցիաները: Իսկ այժմ, երբ ՎՍԴԲ Կուսակցության համագումարը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար այլ ճանապարհ է ընտրել, Հայկական Սեկցիան սրանից հետո [Հայոց] Ազգային Խորհրդի այն բոլոր քայլերի վերաբերմամբ, որոնք ուղղված կլինեն ավտոնոմիայի պաշտպանությանը, ձեռնպահ է մնալու կամ, եթե հարկ համարեց, հակառակ քվե է տալու»[57]*: Այս հայտարարությունը արտահայտում էր մի աշխարհայացքային մոտեցում, որի հակառակ բևեռում էին գտնվում Վրաստանի ՀՅԴ Կոմիտեն և Հայոց ազգային խորհրդում ՀՅԴ ֆրակցիայի անդամները: Հետևապես, ազգային փոքրամասնությունների մշակութային և կրթական կարիքները բավարարելու համար առաջարկվում էր երկու մոտեցում. ՀՅԴ-ի ներկայացուցիչները գտնում էին, որ անհրաժեշտ է ազգային ինքնավարության միջոցով ապահովել յուրաքանչյուր ազգության, այդ թվում նաև հայերի, իրավունքները Վրաստանում: Հայոց ազգային խորհրդի «Թեզերի» 10-րդ կետը շեշտում էր, որ «Հայոց ազգային ինքնավարության իրավասության մեջ մտնում են հայկական հաստատությունների և հայ անհատների ու խմբակների շահերի և իրավունքների պաշտպանությունը, որոնք բխում են նրանց հայ ազգության պատկանելուց»*[58]*: Հակառակ մոտեցումն էին դրսևորում Հայկական սեկցիայի անդամները, որոնք համաձայն էին հօգուտ ժողովրդավարական պետության հրաժարվել մշակութային ու կրթական առանձին ինքնավարությունից, քանի որ, նրանց կարծիքով, նա միմյանցից կբաժանի տարբեր ազգերի աշխատավորներին և խոչընդոտ կլինի սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում, «…որտեղ գոյություն չի ունենա ընդհանրապես որևէ ճնշում, դրա հետ նաև ազգային»*[59]*:*

Վրաստանում հայկական մշակութային ինքնավարության իրականացումը, անշուշտ, պիտի նպաստեր նաև Աբխազիայի հայության ազգային կյանքի բարելավմանն ու զարգացմանը: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ղեկավարությանն ուղղված զեկուցման մեջ Անուշավան Ստամբոլցյանը գրում էր, որ 1918–1919 ուստարում «երջանիկ բացառություն է կազմում Սուխումի շրջանը, ուր տեղական [Հայոց] Ազգային Խորհրդի միջոցով վերսկսվել է դպրոցական գործունեությունը: Այլ տեղերի համեմատությամբ այստեղ մտցված է հայ մանուկների պարտադիր ուսում, բոլոր գյուղերում բացված են դպրոցներ՝ ուսուցիչների բավարար քանակով և նախանձելի վարձատրությամբ: Ուսուցիչները ստանում են ամեն հարմարություն, 4000-5000 ռուբլի և նույնքան հաց և այլ մթերքներ»[60]*: ՎՍԴԲԿ կուսակցական մամուլը հայտնում էր, որ «Աբխազիայի Հայոց Ազգ. Խորհրդի համար դպրոցական գործը հոգատարության ամենամեծ առարկան է եղել: …Չնայած գյուղացի-*

---

[57] *Վրաստանի Հայոց ազգային խորհրդում.– «Բանվորի ձայն», 11.VII. 1920:*

[58] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 142, թ 1:*

[59] *Մի երկու խոսք «Նոր աշխատավորին».– «Բանվորի ձայն», 18. VII. 1920:*

[60] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 26, թ.* 15:

ների այս տարվա տնտեսական անմխիթար դրությանը, շնորհիվ ծխախոտի … - ցածր գնի[61], … ներկա [1919-1920] ուսումնական տարում ոչ միայն վերաբացվել են անցյալում գործող դպրոցները, այլ դրանց վրա ավելացել են բոլորովին նորերը Գագրիի և Կոդորի շրջաններում: Ազգ. Խորհուրդը ամենամեծ ուշադրություն է դարձրել հնարավոր սահմաններում ապահովել ուսուցիչների տնտեսական դրությունը և ազատել նրանց կենսական մթերքների գների աստիճանական բարձրացումից…»[62]: Աբխազիայի հայկական տարրական դպրոցները որպես ծխական գոյություն ունեին տասնյակ տարիներից ի վեր, սակայն ընդգրկված չէին Վրաստանի Հանրապետության դպրոցների ցանկի մեջ[63]: 1919 թ. օգոստոսի 1-ին Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը ընդունեց «Կանոնադրություն Վրաստանի հայոց ժողովրդական դպրոցների»[64], որի հիման վրա գործում էին նաև Աբխազիայի հայկական դպրոցները[65]: Սուխումի շրջանի (Աբխազիայի) Հայոց ազգային խորհրդի գործունեության ընթացքում հայկական դպրոցների թիվն աճել էր 12-ից մինչև 30-ի, որտեղ ուսանում էին 1567 աշակերտ, այդ թվում՝ 511 աղջիկ[66]: Դպրոցներում դասավանդում էր 57 ուսուցիչ[67], որոնց աշխատանքը հսկում էին տեսուչը (Վաղարշակ Աղեկյան, այնուհետև՝ Տիգրան Սողոմոնյան) և հրահանգիչը, որոնք ենթարկվում էին Վրաստանի Հայոց ազգային խորհրդի կողմից նշանակված շրջանային տեսչին: Աբխազ ականավոր մանկավարժ և հասարակական գործիչ Անդրեյ Չոչուան վկայում է, որ հայ ուսուցիչները տեղացի չէին և, աշխատանքի հրավիրվելով նոյեմբերից մայիս, վարձատրվում էին բնամթերքով[68]: Ի տարբերություն Վրաստանի հայկական ժողովրդական այլ դպրոցների, Աբխազիայում գտնվողները չէին ֆինանսավորվում Վրաստանի Հայոց ազգային խորհրդի բյուջեից և դրանց ծախսերն ամբողջովին հոգում էր համշենահայ համայնքը[69]: Եթե Վրաստանի Հայոց ազգային խորհուրդն իրեն ենթակա դպրոցներում ուսուցիչներին աշխատանքի հրավիրելիս բնակարանից, վառելիքից և լուսավորությունից զատ առաջարկում էր տարեկան 15000 ռ. աշխատավարձ[70], ապա Աբխազիայի հայկական դպրոցներում այդ պայմաններն այլ էին: Աբխազիայի Հայոց ազգային խորհուրդը, բացի ուսուցիչների կենցաղային պայմանները ապահովելուց, Սուխումի դպրոցում նրանց վճարում էր տարեկան 24000 ռ. աշխատավարձ, Ցեբելդայի գավառամասում՝ 20000 ռ., 18 փութ ծխախոտ, 2 փութ լոբի, Գագրայի և Գուդաութայի գավառներում՝ 10000 ռ. և ամսական 5 ֆունտ յուղ, 60 հատ հավկիթ, 30 շիշ կաթ[71]:

---

[61] *Աբխազիայի համշենահայ բնակչության մեծ մասը ծխախոտի աճեցմամբ էր զբաղվում:*
[62] *Դպրոցական գործը Աբխազիայում.– «Բանվորի ձայն», 5. X. 1919.*
[63] *Հայ դպրոցները և վրաց մամուլը.– «Նոր աշխատավոր», 19. IX. 1920.*
[64] *«Ժողովրդի ձայն», 5. VIII. 1919.*
[65] *«Նոր աշխատավոր», 1. X. 1920.*
[66] *ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 409, թ. 63:*
[67] *Այլ տվյալներով՝ 56, տե՛ս էջ 195:*
[68] А. М. Ч о ч у а. Собрание сочинений. Т. 3. Сухуми, 1976, с. 90.
[69] *«Բանվորի ձայն», 8. VIII. 1920.*
[70] *Հայտարարություն.– «Բանվորի ձայն», 12. X. 1919.*
[71] *Նույն տեղում, 5. X. 1919.*

1919 թ. վերջերից Վրաստանում պետական ծխախոտային մենաշնորհի կիրառումը հանգեցրել էր Աբխազիայի հայերի բարեկեցության կտրուկ նվազեցմանը[72]: Ըստ Սուխումի Հայոց ազգային խորհրդի անդամ Տ. Սողոմոնյանի, «շրջանի հայ գյուղացին մինչև այսօր տվել է իր [դպրոցների] ուսուցիչներին հաց, յուղ, հավ և այլն, բայց շնորհիվ այն բանի, որ կառավարությունը համարյա սնանկացրել է այդ շրջանի հայությանը, նա այսօր անընդունակ է մի կտոր ավելորդ հաց ունենալու, որպեսզի ուսուցիչներին բաժին հատկացնի»[73]: Քանի որ Սուխումի և Վրաստանի Հայոց ազգային խորհուրդների նախագահությունների միջև հարաբերություններն «այնքան էլ սերտ չեն եղել»[74], ապա առաջինը Թիֆլիսից նյութական որևէ աջակցություն չէր ստանում: «Սուխումի շրջանում կառավարությունը բյուջեի եկամտի մեծ մասը ստացել է հայ գյուղացու քրտինքով մշակած ծխախոտի միջոցով: Ինչո՞ւ այդ նույն գյուղացին իրեն իրավունք չպետք է համարի կառավարությունից պահանջելու … իր աշխատանքից ստացած գոնե մի չնչին մասը և հոգա իր մանուկի ուսման գործը»[75],– իրավացիորեն հարց է տալիս Տ. Սողոմոնյանը: Հույս ունենալով օգտվել Վրաստանի իշխող կուսակցության ազդեցիկ գործիչների հետ իր մտերիմ հարաբերություններից՝ ՎՄԴԲԿ Հայկական սեկցիայի անդամ և Սուխումի Հայոց ազգային խորհրդի նախագահ Խաչատուր Ավդալբեկյանը 1920 թ. սկզբին դիմել էր լուսավորության նախարարին և խնդրել, որ նա պետական միջոցներից աշխատավարձի հավելումներ վճարի Աբխազիայի հայկական դպրոցների ուսուցիչներին, ինչպես դա ընդունված էր պետական դպրոցների համար: Բանակցություններին մասնակցել է նաև Վրաստանի Հայոց ազգային խորհրդի Գործադիր մարմնի նախագահ Արամայիս Երզնկյանը, քանի որ ենթադրվում էր, թե այդ գումարը կհատկացվի Վրաստանի Հայոց ազգային խորհրդի միջոցով: Կառավարությունը խոստանում էր փետրվար ամսից ուսուցիչներին վճարել 800-ական ռուբլի հավելում մինչև բյուջետային նոր տարվա սկիզբը, որից հետո՝ լրիվ աշխատավարձ: Սակայն հայ ուսուցիչների համար նախատեսված դրամը Սուխումի Հայոց ազգային խորհրդին չէր հատկացվել[76]: Ի դեպ, 1920–1921 ուստարվա համար այդ բանակցությունները նույնպես շարունակվել էին: Դրամական նպաստը տրամադրվել էր 1920 թ. ապրիլին, քանի որ, Գ. Ճումբուրիձեի ասելով, «այդ ժամանակ նախարարության մեջ մշակվում էր 1920–1921 բյուջետային տարվա նոր նախահաշիվը և [Աբխազիայի] հայկական դպրոցներն առանց արգելքի մտցվեցին պետության հաշվով պահվող կառավարական դպրոցների թվի մեջ»[77]: Երկու կիսամյակների համար նախատեսված դրամը փոխանցվել էր Աբխազիայի զեմստվոնե-

---

[72] *Բ. Մ ա ի լ յ ա ն. Քաղաքական իրադրությունը և համշենահայերի կացությունն Աբխազիայում 1918-1920 թթ.– ՊԲՀ, 2005, № 1, էջ 125-140:*

[73] *Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն.– «Նոր աշխատավոր», 2.X.1920.*

[74] *Դաշնակցականները և Սուխումի Հայոց ազգային խորհուրդը.– «Բանվորի ձայն», 3.X.1920.*

[75] *«Նոր աշխատավոր», 2. X. 1920.*

[76] *Դարձյալ պ. Ճումբուրիձեի հոդվածի առթիվ.– «Մշակ», 31. X. 1920.*

[77] *«Աշխատավոր», 22. X. 1920.*

րին: Սակայն այդ մասին Սուխումի Հայոց ազգային խորհրդին չէին իրազեկել[78]: 1920 թ. օգոստոսին կայացել է շրջանային ուսուցչական ժողով, որը պարտավորեցրել է Ավդալբեկյանին պարզել խոստացած հավելումների ճակատագիրը: 1920 թ. սեպտեմբերին Սուխումի շրջանի գավառական զեմստվոների կենտրոնական վարչությունը շրջաբերական է հղել Աբխազիայի հայկական բոլոր դպրոցներին, որով տեղեկացնում է, թե նրանք անցնում են զեմստվոների վերահսկողության ներքո և պահվելու էին վերջիններիս միջոցների հաշվին, իսկ ուսուցիչներն էլ ազատվում են աշխատանքից: Դա նշանակում է, որ ուսուցիչներ վարձելը և ընդհանրապես դպրոցական գործի ղեկավարությունն անցնում է զեմստվոների վարչություններին: Սուխումի Հայոց ազգային խորհրդի Գործադիր մարմնի անդամներն անմիջապես այդ մասին հեռագրով տեղեկացնում են Ավդալբեկյանին: Այդ պահին Թիֆլիսում գտնվող Ավդալբեկյանը, կատարվածի մասին չիրազեկելով Վրաստանի Հայոց ազգային խորհրդի Գործադիր մարմնին, իսկույն դիմում է հղում լուսավորության նախարարի տեղակալ Ն. Կ. Ցինցաձեին, որտեղ մանրամասն ներկայացնում է իրավիճակը և մատնանշում, որ նման «հանգամանքներում Սուխումի շրջանի զեմստվոներն անկարող են բավարար բարձրության վրա պահել հայ ազգային դպրոցները[79] և նրանք պիտի շարունակեն պահվել Հայոց Ազգ. Խորհրդի ղեկավարությամբ: Կառավարությունը պիտի նպաստ տա հայ դպրոցներին զեմստվոների միջոցով: Հայոց Ազգ. Խորհուրդը կկազմի ուսուցչական խմբերը, կներկայացնի զեմստվոներին ուսուցիչների ռոճիկների հաշիվը և կստանա դրամը և կբաշխի [աշխատավարձը], իսկ տարվա վերջում ընդհանուր տեղեկագիր կներկայացնի զեմստվոներին իր դպրոցների մասին: Այսպիսով Սուխումի շրջանի Հայոց Ազգ. Խորհուրդը իրեն է վերապահում հայ դպրոցների ամբողջ ղեկավարությունը, իսկ կառավարական օրգաններին՝ զեմստվոներին, մնում է միայն ընդհանուր հսկողության գործը, որը առանց [կառավարական] նպաստ տալու անգամ նրանց իրավունքն է»[80]: Սակայն վրաց պաշտոնյան Ավդալբեկյանի ներկայացրած խնդրանքը մասամբ է ընդունելի համարում և առաջարկում է հայկական ժողովրդական դպրոցները վերջնականապես ենթարկել զեմստվոներին[81]: Սոցիալիստա-

---

[78] *Այս պրակտիկայի մասին Ա. Ջամալյանը գրում էր. «Ժորդանիայի կառավարությունը ողորմելի միջոցներ էր հատկացնում վիրահայ ժողովրդի մշակութային կարիքների, և այդ միջոցներն էլ չէր տալիս Վրաստանի Հայոց ազգային խորհրդին, որ վիրահայ ժողովրդի օրինական կազմակերպությունն էր և մշակութային գործերի անմիջական իրավատերը, այլ գործադրում էր վրացական տեսչությունների և վարչությունների ձեռքով» (Ա. Ջ ա մ ա լ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 116):*

[79] *Աբխազիայի զեմստվոները ունակ չէին ինքնուրույն պահել ենթակա դպրոցները: Սամուրզականի գավառական վարչությունը դիմել էր լուսավորության նախարարությանը Ղալիի բարձր-տարրական դպրոցը ֆինանսավորելու խնդրանքով* (Хроника: ходатайство самурзаканского земства.—"Борьба", 5. XI.1919): *Գումիստայի գավառական վարչությանը պատկանող դպրոցներից 6-ը 1919–1920 ուստարում դարձյալ մնում էին փակ ուսուցիչներ չլինելու հետևանքով: Այդ պարագայում Աբխազիայի զեմստվոները համաձայնության էին եկել լուսավորության նախարարության հետ ազգային դպրոցներն ընդհանուր պետական ցանկի մեջ ընդգրկելու մասին* (Земская и городская жизнь.— "Борьба", 28. XII.1919):

[80] *Դաշնակցականները և Սուխումի Հայոց ազգային խորհուրդը.– «Բանվորի ձայն», 3. X. 1920.*

[81] *Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն.– «Նոր աշխատավոր», 1. X. 1920.*

կան մամուլը, անտեսելով ազգային դպրոցի սկզբունքը, իբրև փոխզիջումային տարբերակ, կոչ է անում հանձնել հայկական տարրական դպրոցները զեմստվոների տնօրինմանը, իսկ խնայած միջոցների հաշվին նվազեցնել ուսման վարձը ժողովրդական միջնակարգ դպրոցներում[82]: 1920 թ. աշնանը Թիֆլիսի մամուլում հրապարակվեցին Գ. Ճումբուրիձեի հոդվածները: Նա պնդում էր նաև, թե գանձարանի հաշվին լուսավորության նախարարությունը պահում է տարրական հայկական 84 դպրոց[83], այդ թվում Աբխազիայում՝ 27-ը: Վերջինիս 56 ուսուցչի համար համապատասխան զեմստվոներում վարկեր էին բացվել հետևյալ հաշվով. 1) Աբխազիայի կոմիսարիատ՝ 5 հաստիք, 2) Գումիստայի զեմստվո՝ 31, 3) Գուդաութայի՝ 11, 4) Կոդորի՝ 9-ը[84]:

1920 թ. Վրաստանում տիրում էր տնտեսական ընդհանուր ճգնաժամ[85]: Հայկական ժողովրդական դպրոցների ֆինանսական ճգնաժամը խորանում էր նաև նրանով, որ սոցիալիստական կառավարությունն իրականացնում էր հայ ուսնոր խավի սնանկացման քաղաքականություն[86]: Այսպես, Սղնախի հայկական ստորինտարրական դպրոցը, որի ծախսերը կատարվում էին հոգաբարձությանը պատկանող «Լիանոզյան» հասութաբեր շենքից, բռնագրավման հետևանքով հայտնվել էր փակման եզրին[87]:

Մամուլում տեսակետ է հնչում, որ «պետք է խնդրել Վրաստանի կառավարությունից հայկական դպրոցների պահպանության համար որևէ գումար համապետական միջոցներից, որոնք լրացվում են հարկերով – որ վճարում է … նաև Վրաստանի հայ ազգաբնակչությունը: …[Դա] կլինի արդարացի և համապատասխան ազգային փոքրամասնությունների իրավունքների [ապահովման] սկզբունքին…»[88]: 1919–1920 ուստարվա մեջ առաջացած պարտքերը ծածկելու համար Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը ստիպված էր 1920 թ. հուլիսի 1-ին դիմել կառավարությանը և խնդրել 2 մլն ռուբլի նպաստ: 1920 թ. օգոստոսին Իս. Հարությունյանը, հայկական դպրոցների տնտեսական խորհուրդներից պահանջում էր

---

[82] *Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը և նրան ենթակա դպրոցները.– «Նոր խոսք», 27. IX. 1920:*

[83] *Այդ թվի հետ համաձայն չէր Իս. Հարությունյանը, որի տվյալներով Թիֆլիսում գործում էին 19 պետական դպրոց, իսկ գավառում՝ 13-ը (Դարձյալ պ. Ճումբուրիձեի հոդվածի առթիվ.– «Աշխատավոր», 29. X. 1920):*

[84] *Գ. Ճ ո ւ մ բ ո ւ ր ի ձ ե. Դարձյալ հայ դպրոցների մասին.– «Աշխատավոր», 22. X. 1920.*

[85] *Տնտեսական և դրամական ճգնաժամը Վրաստանում.– «Մշակ», 1. IX. 1920.*

[86] *«Վրաց մենշևիկյան կառավարությունը…կը կռվեր բուրժուազիայի դեմ՝ ուժեղացած տուրքերու, կալուածներու պետականացման, ստիպողական փոխառությունների միջոցով…Եվ եթե նկատի առնենք, որ բուրժուազիան Թիֆլիսի մեջ բաղկացած էր Հայերե…բոլորովին պարզ կ՚ըլլա, որ վերոհիշյալ քաղաքականության…գիծերն ալ ամենեն շատ կը հարվածեին Հայերու անմիջական շահերը, և Հայերն էին, որ գլխավորաբար, կը տուժեին թե՛ նյութապես և թե՛ բարոյապես, կը կորսնցնեին իրենց տուները և դրամագլուխները, ազդեցությունն ու դիրքը, և կ՚ընդհարվեին Վրացիներու հետապնդած արհեստական ազգայնացման հետ» (Ա լ. Խ ա տ ի ս ե ա ն. Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը. Պէյրութ, 1968, էջ 225-226):*

[87] *ՀԱԱ, ֆ. 441, ց. 1, գ. 48, թ. 2:*

[88] *Խ. Վ ե ր մ ի շ յ ա ն. Մեր դպրոցների դրությունը.– «Մշակ», 17. II. 1920:*

ներկայացնել 1920–1921 ուստարվա մանրամասն նախահաշիվ[89]: Հաշվարկներից ելնելով՝ օգոստոսի 16-ին լուսավորության նախարարությանը հղվում է երկրորդ դիմումը, համաձայն որի դպրոցական ծախսերը 1920–1921 ուստարում պետք է կազմեին շուրջ 15 մլն ռուբլի. ըստ այդմ, Հայոց ազգային խորհուրդը խնդրում էր աջակցել իրեն՝ հատկացնելով շուրջ 9 մլն ռուբլի նպաստ: Սակայն պատասխանը եղավ այն, թե լուսավորության նախարարությունը դրամ չունի ու չի կարող բավարարել դիմումներից և ոչ մեկը[90]:

1920 թ. սեպտեմբերի 14-ին Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ֆինանսական բաժնի վարիչ Ան. Ստամբոլցյանը զեկուցում էր խորհրդի նիստում, որ «1919թ. հայ ուսնորների վրա մասնադրված էր 25 մլն ռուբլի [ազգային տուրք], բայց գանձվել էր շուրջ 4 մլն: Այս տարի զգալի քիչ կգանձվի, քանի որ ուսնորները խուսափում են վճարելուց»[91]: Նա առաջարկում է դպրոցների թիվը կրճատել կամ դրանց ծախսերը որոշ չափով սահմանափակել: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նախագահ Բ. Թոփչյանը տեղեկացրել է խորհրդի անդամներին, որ «անցյալ տարվա բացը ծածկելու համար վրաց կառավարությանն արված դիմումը մերժվել է, իբր թե ազատ վարկ չունենալու պատճառով: Հայաստանի կառավարությունը ոչ մի հնարավորություն չունի Վրաստանի հայկական դպրոցների պահպանման ծախսերը, եթե ոչ ամբողջ, ապա գոնե մեծ մասը իրեն վրա վերցնելու[92]: Ուսումնական տարվա հենց սկզբից հայկական դպրոցները կանգնած են փակման վտանգի առաջ»[93]:

Ֆինանսական խնդիրը լուծելուց բացի՝ Վրաստանի Հայոց ազգային խորհուրդը ցանկանում էր օրինականացնել իր տնօրինության տակ գտնվող ժողովրդական դպրոցները, որոնց գրանցման համար լուսավորության նախարարությանը ներկայացվել էին բոլոր հիմքերը. այդ դիմումին որևէ պատասխան չհաջորդեց[94]: Կարծիք էր ձևավորվել, որ «Վրաստանի կառավարությունը գիտակցորեն սաբոտաժի է մատնում [Հայոց] Ազգային Խորհրդի դիմումները, ամիսներով ձգձգում նրանց պատասխանները, որպեսզի փաստորեն զրկի Խորհրդին դպրոցական գործը վարելու հնարավորությունից»[95]: Լուսավորության նախարար Ն. Ռամիշվիլին այն կարծիքին էր, որ նախքան նպաստ հատկացնելը հարկավոր է պարզել Վրաստանի Հայոց ազգային խորհրդի և կառավարության փոխհարաբերությունները: Նա գտնում էր, որ հայկական ժողովրդական դպրոցները պետք է պարտադիր հանձնվեին զեմստվոներին: Ռամիշվիլին շեշտում էր, որ Հիմնադիր ժողովը, արձակելով

---

[89] *«Մշակ», 6. VIII. 1920.*

[90] *Գ. Ճ ո ւ մ բ ո ւ ր ի ձ է. Դարձյալ հայ դպրոցների մասին.– «Աշխատավոր», 22. X. 1920.*

[91] *ՀԱԱ, ֆ. 441, ց, 1, գ. 91, թ. 25:*

[92] *Դիմումի փաստը հաստատում է նաև Ա. Ջամալյանը, ասելով. «Վիրահայ Ազգային Խորհուրդը հարկադրված էր Հայաստանի կառավարության նյութական օգնությանը դիմել՝ Վրաստանի հայկական դպրոցների անխուսափելի փակումը կանխելու համար…» (Ա. Ջ ա մ ա լ յ ա ն, Հայ-վրացական կնճիռը.– «Հայրենիք», Բոստոն, 1929, ապրիլ, էջ 147):*

[93] *ՀԱԱ, ֆ. 441, ց, 1, գ. 91, թ. 23:*

[94] *«Աշխատավոր», 15. III. 1920.*

[95] *Բոլորս գործի՛.– «Նոր աշխատավոր», 29. IX. 1920.*

դրական նպաստի մասին վճիռը, անպատճառ պետք է «աչքի առաջ» ունենար հայկական դպրոցները զեմստվոներին հանձնելու հնարավորությունը՝ մինչև մշակութային ինքնավարության խնդրի լուծումը: Որպես փոխհարաբերությունների կարգավորման օրինակ նախարարը մատնանշում էր Սուխումի Հայոց ազգային խորհրդի դիմումում որդեգրված վարքագիծը և առաջարկում էր հայկական այլ դպրոցների խնդիրը ևս կարգավորել նույն կերպ՝ տրամադրելով հսկողական ֆունկցիան զեմստվոներին[96]*: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի անդամների հետ հանդիպման ժամանակ Ն. Ռամիշվիլին շարունակ շեշտում էր Սուխումի շրջանի հայկական ժողովրդական դպրոցների նկատմամբ գտած ելքը (՞) և գովում էր Ավդալբեկյանին: Խորհրդի տնտեսական մասի վարիչ Արշակ Միանսարյանը, տալով հաշվետվություն բանակցությունների մասին, ասում էր. «Ռամիշվիլին հրճվում էր … և ուրախ էր, որ Սուխումի դպրոցները կառավարությանն են անցել: …Եթե Ռամիշվիլին հրճվում է, ուրեմն մի վատ բան է կատարվել մեզ համար»*[97]*: Այսպիսով, վրաց նախարարն Ավդալբեկյանի դիմումն ընդունելի էր համարում այն չափով, որքանով Սուխումի Հայոց ազգային խորհրդի նախագահը համաձայնվել էր ճանաչել Աբխազիայի հայկական ժողովրդական դպրոցների նկատմամբ զեմստվոների վարչությունների վերահսկողական լիազորությունները և զարգացնելով այդ սկզբունքը, Ռամիշվիլին առաջարկում էր հայկական կրթական օջախները վերջնականապես հանձնել զեմստվոների տնօրինմանը: Ավդալբեկյանի ինքնուրույն գործելակերպը հակասության մեջ էր մտել Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ղեկավարության վարած քաղաքականության հետ: Այսպես, 1920 թ. սկզբներին լուսավորության նախարարը հայկական ժողովրդական դպրոցների համար նշանակել էր կառավարական վերաստուգիչ, որը, վրաց պաշտոնյաների հավաստիացումների համաձայն, օժտված էր միայն տեղեկատվական ֆունկցիայով և իբր չէր միջամտելու հայկական դպրոցական կյանքի անցուդարձին: Այս հարցը քննարկվեց Վրաստանի Հայոց ազգային խորհրդի 1920 թ. մարտի 6-ի նիստում: ՎՍԴԲԿ Հայկական սեկցիայի ֆրակցիան միակն էր, որ աջակցում էր նախարարի նախաձեռնությանը: Ի վերջո, Գործադիր մարմնին հանձնարարվեց պատասխանել լուսավորության նախարարությանը, որ Հայոց ազգային խորհուրդը շարունակում է պաշտպանել հայկական ժողովրդական դպրոցների ինքնավարությունը և, հետևապես, մերժում է նախարարի հրամանը*[98]*:*

Խիստ անհանգստացած հայկական կրթական օջախների ճակատագրով՝ Սուխումում ՀՅԴ-ի անդամները, ՀՀ հյուպատոս Վաղարշակ Սահակյանի գիտությամբ, 1920 թ. սեպտեմբերին համշենահայ բնակչությանը կոչ էին արել Աբխազիայի հայկական դպրոցները դուրս բերել Սուխումի Հայոց ազգային խորհրդի իրավասությունից և ենթարկել հատուկ վարչությանը, որը պետք է գործեր ՀՀ հյուպատոսարանին կից ու նրա վերահսկողության ներքո: Այդ ծրագիրը, սակայն, կասեցրեց Վրաստանի Հայոց ազգային խորհրդի շրջանային տեսուչ Վահան Թուրազյա-

---

[96] *Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն.– «Նոր աշխատավոր», 30. IX. 1920.*

[97] *Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն.– «Աշխատավոր», 9. X. 1920.*

[98] *Վրաստանի Հայոց ազգային խորհուրդ.– «Բանվորի ձայն», 14. III. 1920.*

նը, քանի որ, նրա կարծիքով, դա հարցի լուծում չէր և ընդհակառակը, կհանգեցներ վրաց իշխանությունների կոշտ պատասխանին, որոնք այդ քայլը կդիտեին որպես իրենց պետության ներքին գործերին միջամտելու փորձ[99]: Վրաստանի Հայոց ազգային խորհրդի 1920 թ. սեպտեմբերի 27-ի նիստում ՀՅԴ ֆրակցիան հարցապնդում էր ներկայացրել, որտեղ ասված էր, որ Ավդալբեկյանի կողմից լուսավորության նախարարին հասցեագրված գրության մեջ կարևոր զիջումներ էին արվել և կանխորոշվում էին Վրաստանում հայերի մշակութային ինքնավարության սկզբունքները: Նաև նշվում էր, որ Սուխումի Հայոց ազգային խորհրդի նախագահը, չունենալով նման քայլի դիմելու իրավունք, հարվածի տակ է դրել նաև Վրաստանի Հայոց ազգային խորհրդի տնօրինման ներքո գտնվող դպրոցների գոյության հեռանկարը, քանզի ենթադրվում էր, որ իշխանությունները դա պատրվակ բռնելով՝ Վրաստանի Հայոց ազգային խորհրդի ձեռքից կխլեին ժողովրդական դպրոցները[100]: ՀՅԴ և Հայ ժողովրդական կուսակցության ներկայացուցիչները գտնում էին, որ Ավդալբեկյանը, լինելով ՎՄԴԲԿ-ի անդամ և Աբխազիայում Վրաստանի կառավարության քաղաքականության ակտիվ ջատագովներից մեկը, որը, ի դեպ, շեշտում են նաև արդի վրաց պատմաբանները[101], իր կուսակցության ղեկավարության դրդմամբ փաստորեն հարվածել էր Վրաստանի Հայոց ազգային խորհրդի «Թեզերում» որդեգրված վիրահայության մշակութային ինքնավարության սկզբունքներին[102], որոնք չէին նախատեսում պետական մարմինների որևէ միջամտություն հայկական ժողովրդական դպրոցների գործունեության մեջ: «[Ավդալբեկյանի կողմից արված] զիջումները մենք համարում ենք նախադուռ մեր դպրոցները զեմստվոյական դարձնելու համար»[103],– ասում էր Իս. Հարությունյանը: Փաստերը վկայում են, որ Վրաստանի իշխանությունները հակված չէին հանդուրժել պետական վերահսկողությունից դուրս գործող նս մեկ ուսումնական համակարգի գոյությունը և անընդհատ փնտրում էին հարմար պատրվակ հայկական ժողովրդական դպրոցները պետականացնելու համար: Իրադարձությունները զարգացան այնպես, որ Աբխազիայի հայկական դպրոցների կարգավիճակի հարցը դարձավ այն փորձաքարը, որը, անշուշտ, պիտի ունենար մեծ ազդեցություն հայկական ժողովրդական դպրոցների հետագա ճակատագրի վրա Վրաստանում:

1920 թ. սեպտեմբերի 27–29-ը և հոկտեմբերի 2-ին Վրաստանի Հայոց ազգային խորհրդի նիստերի ընթացքում տեղի ունեցան բուռն քննարկումներ՝ նվիրված Վրաստանում հայկական ազգային դպրոցի հիմնահարցին: Մասնավորապես Լեոն (Առաքել Բաբախանյան) Հայոց ազգային խորհրդի անդամների ուշադրությունը սևեռեց մի շարք սկզբունքային հարցերի վրա: «Այստեղ խոսում են այն մասին,– ասում էր ականավոր պատմաբանը,– թե դրամը ամեն բան պետք է որոշի: …Ուրեմն, եթե վրաց կառավարությունը մեզանից շատ դրամ ունի, մի՞թե դա

[99] *Դաշնակցականները և Սուխումի Հայոց ազգային խորհուրդը.– -»Բանվորի ձայն», 3 X 1920.*
[100] *Հայ աշխատավորության «լուսավորիչները».– «Նոր աշխատավոր», 30. IX. 1920.*
[101] Д. Г а м а х а р и я, Б. Г о г и я. Абхазия–историческая область Грузии.Тбилиси,1997, с. 91.
[102] *«Աշխատավոր», 9. X. 1920.*
[103] *Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն.– «Նոր աշխատավոր», 1. X. 1920.*

կնշանակի, որ նա մեզանից ավելի լավ կտանի դպրոցական գործը, կամ մեր դպրոցները ավելի մոտ կլինեն նրա սրտին, քան մեր սրտին: …Հայ մանուկ սերնդի համար դպրոցը խորթ չպետք է լինի: …Եթե վճռել եք Սուխումի պես «փրկել» դպրոցական գործը՝ մի մոռացեք, որ այդ դեպքում մենք Վրաստանում ընդմիշտ կորցնում ենք ազգային դպրոց պահելու իրավունքը: …Եթե կան կարծիքներ, թե կարելի է դպրոցները զեմստվոներին հանձնել, ապա այդպիսիները թող գիտենան, որ մենք կգերադասենք մեր դպրոցները փակել, քան օտարին հանձնել…»[104]:

Վրաստանում հայկական ազգային դպրոցի ստեղծման խնդիրը, որը սերտ կապ ուներ հայերի ազգային մշակութային ինքնավարության հիմնահարցի հետ, որևէ լուծում չստացավ ոչ միայն ներքաղաքական՝ կառավարության դիմադրության, ֆինանսական և ուրիշ բազում խոչընդոտների պատճառով, այլ նաև տրամաբանական ավարտ չունեցավ Վրաստանի խորհրդայնացման հետևանքով:

АРМЯНСКИЕ ШКОЛЫ В РЕСПУБЛИКЕ ГРУЗИИ В 1918–1920 ГГ.

БЕНИАМИН МАИЛЯН

Р е з ю м е

После объявления независимости Грузии в ее пределах оказалась 400-тысячная армянская община, которая нуждалась в определении статуса во взаимоотношениях с новообразованным грузинским государством. По мнению деятелей Армянского национального совета в Грузии, этому должна была способствовать национально-культурная автономия армян, составной частью которой являлась идея о национальной школе. Была поставлена задача создать такую школу, где молодое поколение не только могло бы обучаться на армянском языке, изучать национальную историю и литературу, но и воспитываться в национальном духе, что избавило бы его в будущем от угрозы ассимиляции. Однако действующие под руководством Армянского национального совета народные школы испытывали серьезные трудности из-за противодействия грузинского правительства и отсутствия средств. Вследствие советизации Грузии идея создания национальной школы для армянской общины не осуществилась.

[104] *Հայոց ազգային խորհրդի նիստի արձանագրություն.– «Աշխատավոր», 8. X. 1920.*

ARMENIAN SCHOOLS IN THE REPUBLIC OF GEORGIA IN 1918-1920

BENIAMIN MAILYAN

S u m m a r y

After the announcement of Georgia's independenc a 400000 Armenian community appeared in its domain, that was in need of status definition in the relations with Georgian state. According to activists of Armenian national council in Georgia it would have to assist cultural autonomy of Armenians, consisting part of which was the idea of the National School. A task was set to organize such a School, where young generation could not only be taught in the Armenian language, study the national history and literature, but also be educated in the national spirit, that would save it from the danger of assimilation in future. However acting under direction of Armenian national council the folk schools had serious difficulties because of Georgian government counteraction and the absence of means. In the result of Georgia's sovietization the task of National School creation for Armenian community was not accomplished.